Հայտարարություն*

Գնման հղում՝ **8890-IFT-46540**

Երկիր՝ **Հայաստան**

Գործունեության ոլորտ՝ **Քաղաքային միջավայրի ենթակառուցվածքներ**

Ծրագրի համար՝ **46540**

Ֆինասավորման աղբյուր՝ **Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ**

Պայմանագրի տեսակը՝ **Ծրագրի արդյունք, աշխատանքներ և ծառայություններ**

Ծանուցման եղանակը՝ **Հրավեր մրցույթներին**

Հրապարակման ամսաթիվը՝ **2017թ. նոյեմբերի 27**

Փակման օր՝ **2017 թ. հունվարի 11, Երևանի ժամանակով՝ 11:00**

CW-ICB-2018/01 – Ճանապարհների և փողոցային լուսավորության վերականգնման աշխատանքներ Կոմիտաս փողոցում

Մրցույթի այս հրավերը բխում է գնումների մասին ընդհանուր ծանուցումից (համար 8783-GPN-46540), որը այս ծրագրի համար հրապարակվել է ՎԶԵԲ-ի վեբ-կայքում, գնումների ծանուցում (www.ebrd.com) 2017թ. օգոստոսի 1) :

Գյումրու քաղաքապետարանը, այսուհետ «Պատվիրատու» մտադրված է օգտվել Վերակառուցման և Զարգացման Եվրոպական բանկի («Բանկը») վարկային միջոցների մի մասից՝ նախագծի արժեքի դիմաց ծրագրի իրականացմանը նպաստելու համար :
Պատվիրատուն այժմ անցկացնում է կապալառուի մրցույթ հետևյալ պայմանագրի համար, որը ֆինանսավորվում է վարկի միջոցների մի մասով՝ CW-ICB-2018/01 «Կոմիտասի փողոցում ճանապարհների և փողոցային լուսավորության վերականգնման աշխատանքներ»:
Բանկի վարկային միջոցներով ֆինանսավորվող պայմանագրերի համար մրցույթը բաց է ցանկացած երկրի կազմակերպությունների համար:
Մրցույթի մասնակիցները պետք է բավարարեն հետևյալ նվազագույն չափանիշները, որպեսզի որակավորվեն պայմանագրի կնքման համար.
• Դիմորդը պետք է ունենա միջին տարեկան շրջանառություն՝ որպես հիմնական կապալառու (ընթացիկ և ավարտված աշխատանքների համար սահմանված է որպես հաշվարկ), վերջին 5 (հինգ) տարվա ընթացքում, ոչ պակաս, քան 800 000 (ութ հարյուր հազար) Եվրոին համարժեք գումարի չափով:

• Դիմորդը պետք է ցույց տա, որ նրան հասանելի է, կամ ունի առկա, կայուն ակտիվներ, չծանրաբեռնված իրական ակտիվներ, վարկային գծեր և ֆինանսական այլ միջոցներ, որոնք բավարարում են պայմանագրի շինարարության դրամական հոսքը 4(չորս) ամիս ժամանակահատվածի համար, որը գնահատվում է ոչ պակաս, քան 180000 (մեկ հարյուր ութսուն հազար) եվրոին համարժեք՝ հաշվի առնելով դիմորդի պարտավորությունները այլ պայմանագրերի համար:

- Մրցույթի դիմորդը պետք է ցույց տա, որ նա՝ որպես հիմնական կապալառու, առաջարկվող պայմանագրի բարդությանն ու բնույթին համապատասխան առնվազն մեկ նախագծի իրականացման գործում հաջող փորձառություն ունի վերջին հինգ տարվա ընթացքում: Բացի այդ, հետևյալ հատուկ փորձը՝ (Աշխատանքներ / Նվազագույն պահանջներ).
- Ասֆալտաբետոնե կապիտալ փողոցաշինական աշխատանքներ – **9000 մ²** մեկ տարում
- Փողոցի լուսավորում կամ էլեկտրական աշխատանքներ – **700 l.m.** մեկ տարում

Դիմորդները պետք է լիցենզիա ունենան.
ա) շինարարական աշխատանքների լիցենզիա տրանսպորտի ոլորտում և
բ) շինարարական աշխատանքների լիցենզիա էներգետիկայի բնագավառում՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան: Մրցույթի հայտ ներկայացնելու պահին պահանջվող լիցենզիաների բացակայությունը չի կարող մերժման պատճառ լինել, սակայն դիմորդները պետք է ապացուցեն, որ իրենք ի վիճակի են ձեռք բերել անհրաժեշտ լիցենզիաները նախքան պայմանագրի կնքումը:
Մրցութային փաստաթղթերը կարող եք ստանալ Գյումրու քաղաքապետարանից՝ նշյալ հասցեով, 50,000 ՀՀ դրամ չվերադարձվող գումար կամ դրան համարժեք արտարժույթով վճարում, ՀՀ կենտրոնական բանկի փոխարժեքով կատարելուց հետո:

Ստացողի անվանումը՝ **Գյումրու քաղաքապետարան**
IBAN/ հաշվեհամարը՝ **900215301616**
Արժույթը՝ **AMD, EURO, USD**
BIC/SWIFT CODE՝ **CBRAAM22**

Բանկի անվանումը՝ **ՀՀ Կենտրոնական բանկ**

Թղթակից բանկ՝ **COMMERRZBANK AG, SWIFT BIC: COBADEFF**

Չվերադարձվող գումար վճարելու մասին համապատասխան փաստացի ստացական տրամադրելուց հետո փաստաթղթերը անմիջապես կուղարկվեն առաքիչի միջոցով, առաքողը պատասխանատվություն չի կրում դրանց կորստի կամ ուշացման համար: Բացի այդ, փաստաթղթերը կարող են ուղարկվել էլեկտրոնային տարբերակով, եթե

պահանջվում է, հետագա դիմորդի կողմից չվերադարձվող գումարի վճարման համապատասխան փաստի ներկայացումից հետո: Փաստաթղթերի թղթային և էլեկտրոնային պատճենների միջև անհամապատասխանության դեպքում նախապատվությունը կտրվի թղթային օրինակին:

Հայտերին կից պետք է ներկայացվի հայտի ապահովում 12,000 (տասներկու հազար) եվրոյի կամ դրան համարժեք ՀՀ դրամի չափով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տվյալ օրվա դրությամբ սահմանած փոխարժեքին համապատասխան:

Հայտերը պետք է ներկայացվեն Գյումրու քաղաքապետարան, մինչև 2018 թ. Հունվարի 11-ը, Երևանի ժամանակով ժամը 11:00-ն, այդ ժամանակ դրանք կբացվեն այն դիմորդների ներկայացուցիչների ներկայությամբ, ովքեր կմասնակցեն հայտերի բացմանը:

Մրցութային փաստաթղթեր ձեռք բերած հավանական դիմորդների գրանցամատյանին կարող եք հետևել ստորև նշված հասցեով:

Դիմորդները կարող են լրացուցիչ տեղեկություններ ստանալ, հետևել և ձեռք բերել մրցութային փաստաթղթերը հետևյալ գրասենյակում.

Գյումրու քաղաքապետարան

Վարդանանց հրապարակ 1, Գյումրի, Հայաստանի Հանրապետություն

Կոնտակտային անձ՝ Արարատ Բալաբեկյան, Ծրագրի իրականացման խմբի ղեկավար (Գյումրու քաղաքապետի գլխավոր խորհրդական)

Հեռ՝ + 37431222204

Էլ. հասցե՝ araratbalabekyan@yahoo.com

Ծանոթություն* Հայտարարության անգլերեն տարբերակին կարող եք ծանոթանալ http://www.ebrd.com/work-with-us/procurement/p-pn-171128d.html հղումով, Հայտարարության տեքստի հայերեն և անգլերեն տարբերակների միջև տարընթերցման և անհամապատասխանությունների դեպքում նախապատվությունը տրվում է անգլերեն տարբերակին: